10845

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 17 » 07 2023թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

**ԲՓ № 0130-23**

***Ձեռնարկողը՝*** **Քաղաքացի Կարեն Կարագյոզյան**
*ք. Երևան, Դավիթաշեն 1-ին թղմ. 26, բն 45*

***Գործունեությունը՝*** **Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց 7/2 հասցեում բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**
*Տավուշի մարզ*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝

Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ եզրակացությունը 7 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ**
**ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**
**ԲՓ № 0130-23**

**<17> հոկտեմբեր 2023թ.**

***Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց 7/2 հասցեում բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

| | |
|---|---|
| Ձեռնարկող՝ | Կարեն Կարագյոզյան |
| Փաստաթղթի տեսակը՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ |
| Գործունեությունը՝ | «Գ» կատեգորիա |
| Տեղադրման վայրը՝ | Դիլիջան համայնք, ք. Դիլիջան |

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի ա. ենթակետի՝ վերը նշված նախատեսվող գործունեությունը որպես քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակ դասակարգվում է «Գ» կատեգորիայի:

***Ներածական մաս.*** Կառուցապատող Կարեն Կարագյոզյանի կողմից նախատեսվող բնակելի համալիրի կառուցապատման տարածքը գտնվում է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց թիվ 7/2 հասցեում: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման: Հողամասը սեփականության իրավունքով պատկանում է կառուցապատող Կարեն Կարագյոզյանին, զբաղեցնում է 0.94429հա մակերես (վկ. թիվ 29072022-11-0026. ծածկագիր՝ 11-003-0093-0187) գտնվում է բազմաբնակարան բնակելի շենքերով կառուցապատված տարածքներում, բնակելի և հասարակական շենք-շինությունների հարևանությամբ: Կառուցապատվող տարածքում առկա է կիսակառույց բազմաբնակարան շենք, որի ավարտվածության աստիճանը կազմում է 50 տոկոս: Տարածքի արևմտյան մասով անցնում է Երևան-Իջևան մայրուղային ծանապարհը:

Կառուցապատվող տեղամասը չի առնչվում Դիլիջան ազգային պարկի, պատմամշակութային տարածքների և դրանց պահպանական գոտիների հետ ( «Դիլիջան» ազգային պարկից գտնվում է 455 մ հեռավորության վրա/ արևելք ուղղությամբ): Շինարարական աշխատանքներին խոչնդոտող հատման ենթակա ծառաթփուտային բուսականությունը բացակայում է:

Տարածքը գտնվում է ծովի մակարդակից 1300մ բարձրության վրա: Ռելիեֆը լեռնային - բլրային է՝ ընդհանուր թեքությամբ դեպի հարավ: Հիդրոերկրաբանական տեսակետից ջրատար հորիզոնները տարածքի նստվածքային և հրաբխային-ապարներում բացակայում են: Աղստև գետը և Բլդան վտակը կառուցապատվող տարածքից գտնվում է 470-500 մ հեռավորությունների վրա: Շենքերի

սեյսմազինվածության մակարդակը նախատեսված սեյսմիկ - III սեյսմիկգոտու համար (9 Բալ և ավելի):

***Նկարագրական մաս.*** Համաձայն էսքիզային նախագծի և Դիլիջան համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ Կարեն Կարագյոզյանին սեփականության իրավունքով պատկանող 9449,2 մ² մակերեսով հողամասում կառուցվող բնակելի համալիրը՝ գոյություն ունեցող բնակելի տներից բացի կներառի 15+2 կցաշար բնակելի տներ, ավարտին հասցնելով նաև գոյություն ունեցող կիսանկուղային հարկով երեք հարկանի պանելային կիսակառույց բազմաբնակարան բնակելի շենքը՝ վերջինիս ավելացնելով մեկ հարկ և մանսարդային հարկ (1+1): Նոր կառուցվող բնակելի համալիրը կունենա համակցված տիպի 17 բնակելի տներ (15+2), որոնցից 15-ը կլինեն միատիպ և 2-ը՝ միատիպ: Նախատեսվում է ունենալ նաև ավտոկայանատեղի, խաղահրապարակ, հանգստի գոտի, մարզահրապարակ, կրակարան, ճանապարհներ և բարեկարգման տարրեր: Ընդհանուր բակը բարեկարգվելու է կանաչապատ գոտիով, մայթերով, ճանապարհով, խաղահրապարակով:

Տանիքները լինելու են լանջավոր: Ջրահեռացումը բակից իրականացվում է անմիջապես տարածքի հարևանությամբ, անցնող ջրահեռացման ցանցով: Հողամասն ապահովված է ինժեներական ենթակառուցվածքներով (ջրատար, գազատար, կոյուղատար, էլեկտրահաղորդման գիծ): Կառուցապատողը հանդիսանում է բաժանորդ, բնակելի համալիրի արտաքին ինժեներական ցանցերը միանալու են տարածքում գոյություն ունեցող քաղաքային ցանցերին՝ ծառայությունները մատուցող կազմակերպությունների տրանադրած պայմանագրերի համաձայն: Բոլոր հարկերի ընդհանուր օգտագործման տարածքներում նախատեսվում է հակահրդեհային ջրագիծ: Ջեռուցումը և տաք ջրամատակարարումը բնակարաններում և տարածքներում իրականացվելու է անհատական կաթսաների միջոցով, գազամատակարարման համար տեղադրվելու է գազամատակարարման բաշխիչ-վահանակ: Բոլոր մասնաշենքերի գազամատակարարման խողովակներն անցնում են ստորգետնյա հատվածով, շենքի մոտ բարձրանալով մտնում են սանդղավանդակին կից պատշգամբ, որտեղ ամեն հարկում տեղադրված են գազի հաշվիչները բնակարանների համար: Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ, որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտագործմամբ:

Կառույցում նախատեսված է նաև հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու անհրաժեշտ պայմաններ:

Բնակելի համալիրը կառուցման շինարարական և ճարտարապետական լուծումներում հաշվի է առնվել էներգախնայողության և էներգաարդյունավետության օրենսդրական պահանջների ապահովումը՝ նախատեսելով ջերմամեկուսացման տեխնիկական լուծումներ: Շենքերի արտաքին պատերը իրականացվում են փրփրապոլիստիրոլային ջերմամեկուսիչ սալերով՝ 6սմ հաստությամբ: Բոլոր պատերը արտաքինից կջերմամեկուսացվեն և կերեսպատվեն բազալտե և տրավերտինե սալերով: Էներգախնայողության նպատակով նախատեսվող միջոցառումներից կարևորվում են նաև բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների և վիտրաժների, երեսպատման համակարգի նախատեսումը, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացումը և ջերմամեկուսիչների օգտագործումը: Բնակելի համալիրի տարածքում կենցաղային աղբի հավաքման համար նախատեսվում են տեղադրել աղբամաններ, որոնց տեղադրման վայրերը կհամաձայնեցվեն Դիլիջանի համայնքապետարանի հետ:

Բնակելի համալիրի տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են.

- Կառուցապատվող հողամասի մակերես՝ 9449,2 մ²
- Կանաչապատման մակերես՝ 4543,6 մ² /48,1%
- Գոյություն ունեցող կցաշար տների կառուցապատման մակերես «Ա» 609,76 մ²
- Գոյություն ունեցող բազմաբնակարան շենքի կառուցապատման մակերես 428,47մ ²
- Նոր նախագծվող կցաշար տների կառուցապատման մակերես «Բ» 899,4 մ²
- Նոր նախագծվող կցաշար տների կառուցապատման մակերես «Ա» 76.68 մ²
- Կառուցապատման ընդհանուր մակերես 2014,31 մ² /21,3%
- Անջրանցիկ մակերեսներ (ճանապարհ, մայթ, սալվածք) 2891, 29մ² /30,6%
- Բազմաբնակարան շենքի բնակարանների քանակը՝ 23 հատ
- Ավտոկայանատեղիների քանակը՝ 52 հատ
- Գոյություն ունեցող կցաշար բնակելի տների քանակը տիպ «Ա»՝ 16
- Նոր կառուցվող կցաշար բնակելի տների քանակը՝ տիպ «Բ» 15
- Նոր կառուցվող կցաշար բնակելի տների քանակը՝ տիպ «Ա» 2:

Հողամասում կցաշար տների և բազմաբնակարան շենքի կառույցների ճարտարապետական լուծումները, շենքի արտաքին հարդարման և ձևավորման նյութերի տեսակները համահունչ են լինելու տարածքում գոյություն ունեցող կառուցապատմանը: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատվող տարածքների ոռոգումն իրականացվելու է տարածքի համար նախագծվող ոռոգման ցանցի միջոցով: Նախագծված ոռոգման ցանցը՝ 200 մ երկարությամբ կմիանա տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման համակարգին՝ կնքվելիք պայմանագրին համաձայն:

Շինարարական աշխատանքների ժամանակ կառուցապատվող տարածքում հողային աշխատանքներից կառաջանա 2700 խմ հանույթ, որից 1700խմ քանակը կօգտագործվի հետլիցքի համար, իսկ մնացորդային՝ 1000խմ զանգվածը կօգտագործվի շրջակա տարածքների բարեկարգման համար: Շինարարական աշխատանքների ժամանակ հողային աշխատանքներից կառաջանա մոտ 900խմ ծավալով բուսահող (տարածքում վերջինիս հզորությունը միջինը կազմում է 20 սմ), ինչն օրենսդրական պահանջներին համապատասխան հատուկ միջոցառումներով կպահպանվի և կառուցապատման աշխատանքների ավարտից հետո կօգտագործվի կանաչապատման աշխատանքներն իրականացնելու համար:

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախապատրաստական և նախաշինարարական փուլում նախատեսվում է կազմակերպել շինհրապարակ՝ ցանկապատով և այլ անհրաժեշտ ենթակառույցներով: Շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը, վերանորոգումը, վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում և լցակայաններում: Բետոնի և շաղախի առաքումն իրականացվելու է մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ պատրաստի վիճակում, մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Տարածքից մակերևութային ջրերը կհեռացվեն կազմակերպված եղանակով՝ հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Անձրևաջրերը հեռացվելով տարածքից կմիանան տարածքի հարևանությամբ անցնող՝ Մ 500 մմ հեղեղատար ցանցին:

Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է ժամանակավոր տնակներից: Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում

օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, հանված հողային զանգվածի խոնավացման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Ընդհանուր ջրօգտագործումը շին.ժամանակահատվածի համար հաշվարկվել է 624խմ/, որից շինհրապարակի ջրցանի ջրածախսը կկազմի 450 խմ/շին.ժամ/: Շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ ջրօգտագործումը կապահովվի տարածքում առկա ջրագծից: Աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն շինհրապարակում տեղադրվող բիոզուգարաններով, ինչը կսպասարկվի մատակարարող ընկերության կողմից:

Շինհրապարակում կեղտաջրերի առաջացման համար կպահվի տարողություն, որտեղ կեղտաջրերի (բետոնաջրեր և այլն) հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, նստվածքը շին աղբի հետ կհեռացվի աղբավայր, իսկ պարզված ջուրը կօգտագործվի ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում: Շինհրապարակում նախատեսված է անվադողեի լվացման կետ, որտեղ անվադողերը լվացվելուց հետո դուրս կգան շինհրապարակից:

Բնակելի համալիրի կառուցապատման աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական տեխնիկայի շահագործմամբ, բետոնային աշխատանքներով և կուղեկցվեն շինարարության ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու նպատակով հայտում Հայտում ներկայացվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր: Մասնավորապես՝ մթնոլորտային օդի պահպանության նպատակով նախատեսված է՝

- շինարարության ընթացքում պարբերաբար ջրցանի իրականացում (օրական 2-3 անգամ),
- շինարարական նյութերի (ավազ, խիճ, հողային զանգված և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- շինհրապարակում սորուն նյութերի պահեստների ծածկում՝ փոշու տարածումը կանխարգելելու նպատակով,
- շինարարական աշխատանքերի ժամանակ շինությունների ծածկում՝ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում՝ իրականացնելով կարգավորում:

Շինարարության ընթացում հարակից տարածքների համար աղմուկի հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված միջոցառումները ներառում են՝ շինարարական աշխատանքների և տրանսպորտային երթևեկության կազմակերպում սահմանված ժամերին, աղմուկ առաջացնող մեքենաների և սարքավորումների օգտագործումից խուսափում, խլացուցիչների տեղադրում, տեխնիկական միջոցների պարբերաբար ստուգում և կարգաբերման իրականացում:

Հայտում ներկայացվել են նաև շինարարության ընթացքում տարբեր տեսակի թափոնների կառավարմանն ուղղված միջոցառումներ: Հողային ռեսուրսների և շրջակա տարածքների պահպանության նպատակով քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները շինհրապարակում կպահվեն հատուկ հիմքերի վրա (ավազ,

մետաղական կամ բետոնե), բացառելու նպատակով հնարավոր արտահոսքերը շրջակա տարածքներ: Նավթանյութերի արտահոսքը հնարավոր կլինի կանխել՝ շինարարական աշխատանքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակն ապահովելով պարագայում:

Բնակելի համալիրի կառուցման շինարարական աշխատանքների ընթացքում կառաջանա շինարարական աղբ և կենցաղային թափոններ: Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող 1000խմ ծավալով մնացորդային գրունտային զանգվածը կօգտագործվի շրջակա տարածքների բարեկարգման համար, իսկ տարբեր տեսակի շինարարական թափոնները (ընդհանուր 500խ/մ ծավալով) կտեղադրվեն Դիլիջանի համայնքապետարանի կողմից տրամադրված տարածք՝ գործող թափոնների աղբավայր: Կենցաղային աղբը կհավաքվի այդ նպատակի համար նախատեսված աղբամաններում և կանոնավոր կերպով կհեռացվի շինարարական հրապարակից:

Թափոնների կառավարման և շրջակա տարածքները աղտոտումից զերծ պահելու նպատակով նախատեսվում է՝

- շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
- թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,
- շնարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քսայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրկանացվի մասնագիտացված կայաններում,
- շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատակարարներից, բացառել բետոնի պատրաստումը շինհրապարակում,
- վտանգավոր թափոնների հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման կամ տեղակայման արտոնագիր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է բնակելի համալիրի տարածքը կանաչապատել և բարեկարգել: Նախագծի հատատումից հետո տարածքի համար կմշակվի կանաչապատման նախագիծ, որը կհաստատվի Դլիջանի համայնքապետարանի հետ: Կանաչապատման մակերեսը կկազմի տարածքի 50 %-ը, ներառյալ բնական լանդշաֆտի կանաչապատման տարրերը, հիմք ընդունելով նախագծման թույլտվության կանաչապատման պահանջը: Կանաչապատումը կիրականացվի տվյալ լանդշաֆտին բնորոշ ծառատեսակներով: Կանաչապատման համար նախատեսված՝ 4543,6մ$^2$ մակերեսում կտնկվի մոտ 39 հատ ծառատեսակներ և թփեր (վարդ, սամշիտ), ինչը տարածքի համար կծառայի որպես ցանկապատ: Կառուցապատումից ազատ մակերեսում կստեղծվի սիզամարգ, սիզամարգի սալարկ և ծաղկանոց՝ ծաղկասածիլներով: Ամբողջ տարածքի համար կպահանջվի 200 կգ սիզամարգի սերմ: Կանաչապատման համար կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ պահեստավորված՝ 900խմ ծավալով բուսահողը: Տվյալ լանդշաֆտում ծառերի կպչողականությունն ապահովվելու է պարտադիր ոռոգման և խնամքի պայմաններում, որի իրականացման պատասխանատուն հանդիսանում է կառուցապատողը:

Շինարարության փուլի համար նախատեսված բոլոր բնապահպանական միջոցառումները, ներառյալ՝ աշխատանքի և առողջության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները ամփոփվել են բնապահպանական

կառավարման պլանում (ԲԿՊ): Կառուցապատողի կողմից ըստ ժամանակացույցի իրականացվելու է կանոնավոր մոնիտորինգ՝ բնապահպանական միջոցառումներ ծրագրում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը վերահսկելու նպատակով: Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը ամբողջ շինարարության փուլի համար հաշվարկվել է 38644.2 ՀՀ դրամ, որի մեջ մտնում են՝ շինարարության փուլում շինհրապարակի ջրցանումը, ինչպես նաև մթնոլորտային արտանետումների, աղմուկի, թրթռումների, հողային ծածկույթի չափումները, որոնք նախատեսված են ամիսը մեկ հաճախականությամբ:

***Պատճառաբանական մաս.*** Փորձաքննական գործընթացում Հայտի վերաբերյալ ստացված առաջարկություններով և դիտողություններով Հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Դիլիջան քաղաքում անցկացվել են հանրային քննարկումներ: Փորձաքննության գործընթացում իրականացված երկրորդ հանրային քննարկման ընթացքում նախատեսվող գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Քննարկման ընթացքում հարց է բարձրացվել կառուցապատվող տարածքում կանաչապատման լուծումների և կանաչապատման նախագծի վերաբերյալ:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ ընդգրկելով հիմնականում նախատեսվող գործունեության տեղամասը և շինարարության ժամանակահատվածը: Դրանք շինարարության ընթացքում կարող են բացառվել կամ մեղմացվել Հայտի բնապահպանական միջոցառումներ ծրագրում նախանշված մեղմացնող միջոցառումների և Մոնիթորինգի պլանում ամփոփված միջոցառումների և գործողություններ արդյունավետ իրականացմամբ:

## Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքները կազմակերպելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ ՀՀՇՆ I-3. 01. 01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերը հաստատելու մասի քաղաքաշինության նախարարի 2008թ. հունվարի 14-ի թիվ 11-Ն հրամանով հաստատված նորմերով և պահանջներով:

2. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

3. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջ անհրաժեշտ է՝

- պարսպապատել շինարարական հրապարակը,

- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- լվանալ շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

4. 3. Հողի բերրի շերտի հեռացման և պահպանման հետ կապված միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ Կառավարության 02.11.2017 թվականի թիվ 1404-Ն և 08.09.2011 թվականի թիվ 1396-Ն որոշումների պահանջներին համապատասխան:

5. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Դիլիջանի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծին համապատասխան՝ կանաչապատման համար օգտագործելով Դիլիջան քաղաքի կլիմայական և էկոլոգիական պայմաններին հարմարված դեկորատիվ ծառատեսակներ:

6. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Դիլիջանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

4. Կառուցապատման աշխատանքներում անհրաժեշտ է հաշվի առնել շենքերի և շինությունների էներգախնայողության և էներգաարդյունավետության լուծումները՝ համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018թ-ի №426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջները:

5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի (մշտադիտարկումներ) կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Կարեն Կարագյոզյանի կողմից ներկայացված Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոց 7/2 հասցեում բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հերիքնազ Մկրտչյան